եւ նրա միջնորդութեամբ էլ՝ բուն Հայաստանին։ Աւելին կ'ասենք. եթէ անգամ երբ եւ է հնարաւորութիւն ստեղծուի, արդ դաւառը Հայաստանին կցելու, վերջինս դարձեալ պիտի հրաժարուի նման «դանայեան նուէրից», իր իսկ շահերի տեսակէտից։

Բայց այդ պատճառ չէ երբեք, որ վրացիք մոռացութեան տան երբ եւ է, թէ հայութիւնը թէկուզ մի հատիկ Թիֆլիս քաղաքում ինչ է կորցնում։

Նախընթաց յօդուածներից մէկում մենք ասել ենք արդէն, թէ ազգային եւ հայկական ինչ հարստութիւններ են մնացել Վրաստանում։ Բայց, նիւթական հարստութիւնից դուրս այնտեղ ենք թողնում մենք նաեւ մարդկային ահագին հարստութիւններ, առաւելապէս հայերով բնակուած ամբողջ շրջաններ։

Այսպէս, համաձայն նախապատերազմեան վիճակագրութեան, Թիֆլիսի գաւառում (քաղաքը մէջը հաշուած) 1913 թուականին 130 հազար վրացիի հանդէպ 151 հազար հայութիւն կար (ռուս՝ 92 հազար, մահմեդական՝ 28 հազար)։ Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան 43–45 տոկոսը հայեր են, յետոյ գալիս են ռուսները, երրորդ տեղը միայն՝ վրացիք։ Հայոց այդ բազդատական մեծամասնութիւնը (Թիֆլիսում) այսօրուայ իրականութիւն չէ միայն, այլ դարերի։ 100 տարի առաջ՝ հայերը շատ աւելի մեծամասնութիւն էին կազմում այնտեղ, քան այսօր։

Մի ուրիշ պարագայ եւս։ Մինչդեռ Թիֆլիսի գաւառի հիւսիսային մասում միայն ուժեղ է վրացական տարրը, հայութիւնը ուժեղ է, ընդհակառակը, գաւառի հարաւում, այսինքն՝ դէպի Հայաստան տարածուող գաւառամասում։ Այդտեղ վրացական տարրը շատ թոյլ է։ Կարծէք հէնց Թիֆլիս քաղաքից է սկսում տարբերութիւնը։ Թիֆլիսից այն կողմ, դէպի հիւսիս, հայ տարրը շատ քիչ կայ, եղածն էլ վրացախօս է։

Արդ, թէ հարիւր հազարաւոր հայեր, հայկական բազմաթիւ գիւղեր Վրաստանի սահմանի մէջ թողնուել կարող են, ինչո՞ւ Հայկական Բորչալուն Հայաստանին չպիտի վերադարձուի։ Չէ՞ որ նրա կենդրոնն անգամ, նախկին Շուլաւէրը կամ այսօրուան Շահումեանը դուռ հայաբնակ գիւղաքաղաք է, Խրամի աջկողմը։ Ընդունենք մինչեւ իսկ, որ այնտեղ մի քանի, ասենք 10–15 հազար վրացի կայ (դրա կէսն էլ չկայ սակայն). ինչո՞ւ այդ մի քանի հազար վրացու մնալը Հայաստանում՝ մեզք բան պիտի համարուի, մինչ անդին հարիւր հազարաւոր հայեր կան Վրաստանում։

Բայց, ինչպէս ասել եմ ուրիշ անգամներ, այստեղ եւս չեշտում եմ. այս բոլոր հարցերը եւ նրանցից բխող պահանջները մենք ուղղելու ենք ոչ թէ վրացիներին եւ Վրաստանին, այլ՝ ռուսներին եւ Ռուսաստանին։ Ինչպէս երէկ, այնպէս եւ այսօր նրանք են Հայաստանը յաշտողները, մեր հարեւաններին փեչքէչ անողները։ Խորհրդային Ռուսաստանն էր, որ վաճառքի առարկայ դարձրեց մեր դաւառները եւ նահանգները։ Նա էր, որ Բաթումը վրկելու համար Սուրմալուն մանր դրամի վերածեց։

Վերջապէս, նոր սահմանաբաժանումների խնդիրը ներքին խնդիր է, որ Մոսկուան կարող է եւ պարտաւոր էլ է անել։ Պետականութեան, արտաքին եւ այլ հարցեր ու բարդութիւններ չկան մէջտեղ, այլ՝ ներքին վարչական բէփորմի հարց միայն, որի յաջող կարգադրութեան համար հարկաւոր է մէկ բան միայն — չարհամարհել ժողովուրդների կամքը, հաշուի առնել նրանց տնտեսական եւ մանաւանդ ազգային-մշակութային պահանջները, զօրով չպոկել նրանց իրենց ազգային, հարազատ օրգանիզմից։

(Շարունակելի)